ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ «ԿԻԼԻԿԻԱ» ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայկական «Կիլիկիա» առագաստանավի անձնակազմի անդամներին:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նավի անձնակազմին այն խիզախության համար, որ նրանք դրսևորել են իրենց երկարատև ճանապարհորդության ընթացքում՝ ամենուր բարձր պահելով մեր հայրենիքի և ժողովրդի պատիվը: Նորին Սրբությունը նշեց, որ մեր ժողովրդի բոլոր զավակները ուշի-ուշով հետևում էին «Կիլիկիա» առագաստանավի ընթացքին՝ լցվելով հպարտության և երախտագիտության զգացումով:

Հանդիպման ընթացքում նավագնացները Հայոց Հայրապետին ներկայացրեցին իրենց ճանապարհորդության ընթացքում տեղի ունեցած հիշարժան դեպքերն ու իրադարձությունները՝ շեշտելով, որ ամենուր արժանացել են ջերմ ընդունելության: Խոսվեց նաև ապագա ծրագրերի մասին:

Վերջում Գարեգին Բ Հայրապետն ընդգծեց, որ նմանատիպ նախաձեռնությունները գալիս են ամրապնդելու միասնական ոգին ու գիտակցությունը մեր ողջ ժողովրդի մոտ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության «Ռուսաստանյան երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության նախագահ Գենադի Ֆադեևին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկաթուղային հաղորդակցության ոլորտում ներկայիս կացության, համագործակցության ու ապագա ծրագրերի մասին:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանը, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արարատ Խրիմյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԹՈՒՐՔ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ

Դեկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Արևելյան խորհրդաժողովի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Թուրքիայից Հայաստան ժամանած շուրջ երեսուն մտավորականների՝ ուղեկցությամբ «Ակոս» և «Ժամանակ» թերթերի գլխավոր խմբագիրներ Հակոբ Դինքի և Արա Գոչունյանի:

Ներկայացնելով հանդիպման մասնակիցներին՝ «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Դինքը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ հատկապես նշելով, որ ծրագրի մասնակիցների նպատակն է՝ ավելի մոտիկից ճանաչել Արևելքում իրենց հարևաններին, ծանոթանալ նրանց մշակութային, քաղաքական, տնտեսական և կրոնական կյանքին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկաներին և հանդես բերված նախաձեռնությունը՝ նշելով. «Մտավորականությանը կարևոր առաքելություն է վերապահված ինչպես երկրների ներազգային ու հասարակական կյանքում, կրթության ու դաստիարակության գործում, այնպես և ժողովուրդների ու երկրների փոխհարաբերությունների ձևավորման, մերձեցման և զարգացման բնագավառներում»:

Հանդիպման ընթացքում, ի պատասխան թուրք մտավորականների հարցումների, Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու առաքելությունը խորհրդային և Հայաստանի անկախ պետականության ներկա ժամանակներում՝ առանձնակիորեն անդրադառնալով հայ ժողովրդի համազգային կյանքում, միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունների ոլորտում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծավալած գործունեությանը: Հայաստան-Թուրքիա ներկա հարաբերությունների առնչությամբ Վեհափառ Հայրապետը մասնավոր

անդրադարձ ունեցավ Հայոց Ցեղասպանությանը՝ շեշտելով, որ ցեղասպանությունը պատմական իրողություն է, որը չի կարող քննարկման հարց լինել:

Տարածաշրջանում, ինչպես և Մերձավոր Արևելքում առկա ազգամիջյան հակամարտությունների հարցի առնչությամբ Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հարկ է զերծ մնալ կոնֆլիկտներին կրոնական հենք և երանգավորում հաղորդելուց՝ հակամարտությունների լուծման ու կարգավորման կարևորագույն ճանապարհ նկատելով նաև միջկրոնական երկխոսությունը: Եզրափակելով իր խոսքը՝ Նորին Սրբությունը հաջողություններ մաղթեց «Արևելյան խորհրդաժողովի նախաձեռնության» առաքելությանը:

Հանդիպմանը ներկա էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ԳՐԻԶԼՈՎԻՆ

Դեկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի նախագահ Բորիս Գրիզլովին :

Բարի գալուստ մաղթելով հարգարժան հյուրին հայոց նվիրական հոգևոր կենտրոն Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ-ռուսական դարավոր բարեկամությանը՝ հույս հայտնելով, որ ապագայում էլ ավելի պիտի զարգանան մեր երկու երկրների միջև առկա տնտեսական և մշակութային կապերը:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար՝ ՌԴ Պետական Դումայի նախագահն անդրադարձավ Հայաստան կատարած իր այցի մանրամասներին ու ձեռքբերված պայմանավորվածություններին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց այն ուշադրության և հոգատարության մասին, որ ՌԴ իշխանությունները ցուցաբերում են հայ համայնքի հանդեպ: Խոսվեց նաև Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ջերմ հարաբերությունների մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը, ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Մհեր Շահգելդյանը, ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովը: